

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵՂ

Ս.Բ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 28 Ապրիլ 2019

108

DIMANCHE, 28 Avril 2019



ՆՈՐ ԿԻՐԱԿԻ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ
NOUVEAU DIMANCHE

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

5.34-6.7

ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿԷՆ

3.1-12

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

1.1-17

Les lectures de la Bible d'aujourd'hui :

JACQUES 3.1-12

JEAN 1.1-17

Պատարագիչ՝ Հոգևոր Հովիւ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant: Prêtre Paroissial

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

Office Matines à 9 :30

Ս. Պատարագ Ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10:30

Deacons - Acolytes

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organists: Mr. Karen Manucharyan

Mrs. Houri Bedrossian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՅԱԿՈՒՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

3.1-12

Եղբայրներս, շատ վարդապետող մի՛ ըլլաք, գիտնալով որ աւելի մեծ դատաստան պիտի ընդունիք. Վասն զի ամէնքս ալ շատ յանցանքներ կ'ընենք. եթէ մէկը խօսքով յանցանք չընէ՝ անիկա կատարեալ մարդ է, որ կարող է բոլոր մարմինն ալ սանձել: Գիտէք թէ ձիերուն բերանը սանձ կը դնենք, որպէս զի անոնք մեզի հնազանդիին ու անոնց բոլոր մարմինը կը կառավարենք. Ահա նաւերն ալ որչա՛ փ մեծ բաներ են եւ սաստիկ հովերէն կը քշուին, բայց շատ փոքր դէկով մը կը կառավարուին՝ դէկավարին կամքը ո՛ր կողմը որ ուզէ: Այսպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, բայց մեծ բաներ կը խօսի: Ահա քիչ մը կրակը ո՛րչափ բան բոցի կու տայ: Լեզուն ալ կրակ մըն է, անիրաւութեան տիեզերք մը: Լեզուն մեր անդամներուն մէջ այնպէս դրուած է, որ բոլոր մարմինը կ'ապականէ եւ բնութեան շրջանը կը բռնկեցնէ ու ինք գեհեանէն կը բռնկի:

Բոլոր գազաններուն ու թռչուններուն եւ սողուններուն ու ծովուն մէջ եղածներուն բնութիւնը կը նուաճուի եւ նուաճուած է մարդկութենէն: Բայց մարդ լեզուն չի կրնար նուաճել: Անիկա անգուսպ չար է ու մահաբեր թոյնով լեցուն: Անով կ'օրհնենք Աստուած ու Հայրը եւ անով կ'անիծենք մարդիկ՝ որոնք Աստուծոյ նմանութիւնովը ստեղծուած են:

Միեւնոյն բերնէն կ'ելլեն օրհնութիւն ու անեծք: Ե՛ղբայրներս, պէտք չէ որ այս այսպէս ըլլայ: Միթէ աղբիւր մը միեւնոյն բերնէն անոյշ ու լեղի կը բխեցնէ՞ :

Միթէ կարելի՞ է, եղբա՛յրներս, որ թզենին ձիթապտուղ բերէ կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս կարելի չէ որ աղբիւրէ մը աղի ու անոյշ ջուր հոսի:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1.1-17

Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր: Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ: Կեանքը անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը զանիկա չճանչցաւ:

Աստուծմէ դրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր: Ասիկա վկայութեան համար եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնքը անոր միջոցով հաւատան: Ինք չէր այն Լոյսը, հապա եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ:

Ճշմարիտ Լոյսը ան է, որ աշխարհի եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր եւ աշխարհ անով եղաւ, բայց աշխարհ զանիկա չճանչցաւ: Իրեններուն եկաւ, սակայն իրենները զինք չընդունեցին: Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը. Որոնք ո՛չ արիւնէ եւ ո՛չ մարմնի կամքէ, ո՛չ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան: Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ անոր փառքը տեսանք՝ չորմէն միաձնի փառքին պէս, շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն:

Յովհաննէս վկայեց անոր համար եւ աղաղակեց ըսելով. «Ասիկա է, որուն համար կ'ըսէի. 'Ան որ իմ ետեւէս կու գայ, ինձմէ առաջ եղաւ, վասն զի ինձմէ առաջ էր'»: Եւ անոր լեցունութենէն մենք ամէնքս շնորհք առինք շնորհքի տեղ: Վասն զի օրէնքը Մովսէսին ձեռքով տրուեցաւ, բայց շնորհքը եւ ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսին ձեռքով եղան:

JACQUES 3.1-12

Mes frères, ne soyez point plusieurs maîtres; sachant que nous [en] recevrons une plus grande condamnation. Car nous péchons tous en plusieurs choses; si quelqu'un ne pêche pas en paroles, c'est un homme parfait, et il peut même tenir en bride tout le corps. Voilà, nous mettons aux chevaux des mors dans leurs bouches, afin qu'ils nous obéissent, et nous menons çà et là tout le corps. Voilà aussi les navires, quoiqu'ils soient si grands, et qu'ils soient agités par la tempête, ils sont menés partout çà et là avec un petit gouvernail, selon qu'il plaît à celui qui les gouverne. Il en est ainsi de la langue, c'est un petit membre, et cependant elle [peut] se vanter de grandes choses. Voilà [aussi] un petit feu, combien de bois allume-t-il? La langue aussi est un feu, [et] un

monde d'iniquité; [car] la langue est telle entre nos membres, qu'elle souille tout le corps, et enflamme [tout] le monde qui a été créé, étant elle-même enflammée [du feu] de la géhenne. Car toute espèce de bêtes sauvages, d'oiseaux, de reptiles, et de poissons de la mer, se dompte, et a été domptée par la nature humaine. Mais nul homme ne peut dompter la langue : c'est un mal qui ne se peut réprimer, [et] elle est pleine d'un venin mortel. Par elle nous bénissons [notre] Dieu et Père; et par elle nous maudissons les hommes, faits à la ressemblance de Dieu. D'une même bouche procède la bénédiction et la malédiction. Mes frères, il ne faut pas que ces choses aillent ainsi. Une fontaine jette-t-elle par une même ouverture le doux et l'amer? Mes frères, un figuier peut-il produire des olives? ou une vigne des figues? de même aucune fontaine ne peut jeter de l'eau salée et de [l'eau] douce.

JEAN 1.1-17

Au commencement était la Parole, et la Parole était avec Dieu; et cette parole était Dieu : Elle était au commencement avec Dieu. Toutes choses ont été faites par elle, et sans elle rien de ce qui a été fait, n'a été fait. En elle était la vie, et la vie était la Lumière des hommes. Et la Lumière luit dans les ténèbres, mais les ténèbres ne l'ont point reçue.

Il y eut un homme appelé Jean, qui fut envoyé de Dieu. Il vint pour rendre témoignage, pour rendre, dis-je, témoignage à la Lumière, afin que tous crussent par lui. Il n'était pas la Lumière, mais il [était envoyé] pour rendre témoignage à la Lumière.

[Cette] Lumière était la véritable, qui éclaire tout homme venant au monde. Elle était au monde, et le monde a été fait par elle; mais le monde ne l'a point connue. Il est venu chez soi; et les siens ne l'ont point reçu; Mais à tous ceux qui l'ont reçu, il leur a donné le droit d'être faits enfants de Dieu, [savoir] à ceux qui croient en son Nom; Lesquels ne sont point nés de sang, ni de la volonté de la chair, ni de la volonté de l'homme; mais ils sont nés de Dieu.

Et la Parole a été faite chair, elle a habité parmi nous, et nous avons contemplé sa gloire, [qui a été] une gloire, comme la gloire du Fils unique du Père, pleine de grâce et de vérité. Jean a [donc] rendu témoignage de lui, et a crié, disant : c'est celui duquel je disais : celui qui vient après moi m'est préféré, car il était avant moi. Et nous reçu de sa plénitude, et grâce pour grâce. Car la Loi a été donnée par Moïse; la grâce et la vérité est venue par Jésus-Christ.



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԽՆԴԵԼՈՒ

Սրտի խորերէն խօսք Աստուծոյ հետ

Է

Չար գործերուս հետեանքով

Մեղքի հիւանդութեան անկողինն ինկած եմ,

Իբրեւ կենդանի դիակ եւ խօսուն մեռեալ.

Ով բարերար Որդի Աստուծոյ,

Արգահատէ թշուառիս ողբուկոծերուն վրայ,

Եւ օրհնեալ աչքերուդ ցօղով վերականգնէ եւ ողջնցուր զիս,

Ինչպէս վերակենդանացուցիր մեռած բարեկամիդ:

Ստուգապէս դառնացածս՝ մեղքի գուրին մէջ կը մնամ վարանած.

Ով Բարձրեալին Որդի, անստուեր արեւ,

Ձեռք տուր եւ վեր՝ ճառագայթներուն լոյսին հանէ զիս:

(Շարունակելի)

PRIÈRE EN DEMANDE DE BONNE SANTÉ

VI

Je suis étendu par mes crimes sur le grabat des misères,

dans le lit des péchés,

cadavre vivant et, bien que parlant, mort;

en exprimant ta compassion envers ma détresse

avec des sanglots et des cris déchirants,

ô bienfaisant Fils de Dieu, par la rosée de tes yeux bénis

veille à nouveau me rendre à la vie, comme Tu l'as fait pour ton Ami,

en le ressuscitant de la mort insensible.

Moi qui suis à juste titre dans l'amertume

et dans une grande perplexité,

Plongé que je suis dans la fosse de mes péchés,

Tends-moi la main, ô Soleil sans obscurité,

Fils du Très-Haut, fais-moi remonter à la lumière de tes clart.s.

(À suivre)

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԿԻՐԱԿԻ, 28 Ապրիլ 2019**



Առաջնորդ Սրբազան Հոր թելադրանքով եւ փափաքովը
Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդին
եւ Յարակից մարմիններուն,
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի՝
**ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՍՈՒԹԱՖԵԱՆԻ**
Վախճանման 40-ին առիթով



Առաջնորդ Սրբազան Հոր թելադրանքով եւ փափաքովը
Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդին
եւ Յարակից մարմիններուն,
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի՝ Ի Յիշատակ՝
**ՍԷՐԷԼԱՆԳԱՅԻ ՄԷՋ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ
ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԶՈՀԵՐՈՒ**
Հոգիներուն ի հանգիստ



Պր. Վահան Գասապեանի,
Տիկ. Նատին Գասապեանի եւ զաւակներուն՝
Լարայի, Զէնտրբի եւ Գարլի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց
սիրեցեալ մօր, մեծ մօր եւ կեսրոջ՝

ԻՎՕՆ ԱՃԷՄԵԱՆԻ
(YVONNE ADJEMIAN)

Մահուան 40-ին առիթով
(Սուրճի սպասարկություն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ):



Քէօրհաճեան եւ Փիլաֆեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ եւ հարազատին՝
ԱԳԱՊԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ ՔԷՕՐՀԱՃԵԱՆԻ
(AKABI VARTANYAN KEORHADJIAN)

Մահուան 40-ին առիթով
Ինչպէս նաեւ՝

Իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝
ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ՍԻՐԱՆՈՅՇ ՔԷՕՐՀԱՃԵԱՆՆԵՐՈՒ
(ARDASHES & SIRANOUSHE KEORHADJIAN)

Ինչպէս նաեւ՝

Իրենց սիրեցեալ եղբոր եւ մօրեղբոր՝
ՄԻՀՐԱՆ ՔԷՕՐՀԱՃԵԱՆԻ
(MIHRAN KEORDAJIAN)

Հոգիներուն ի հանգիստ

(Սուրճի սպասարկություն «Ծխական Խորհուրդի» սրահին մէջ):



Այրի Տիկ. Զարուհի Զինգիլեանի,
Տ. եւ Տիկ. Խաչիկ եւ Սիւզան Շահպազեանի
եւ դուստրին՝ Անիի.
Տ. եւ Տիկ. Պետրոս եւ Հռիփսիմէ Զոպանեանի
եւ զաւակներուն՝ Արայի եւ Արմենի,
Տ. եւ Տիկ. Զավէն եւ Երանուհի Պուտաղեանցի
եւ զաւակներուն՝ Շանթի եւ Լեւոնի,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնույն, հօր եւ մեծ հօր՝

ՅԱԿՈԲ ՇԱՀՊԱԶԵԱՆԻ
(HAGOP SHAHBAZIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ



ՆՈՒԻՐԱՏՈՒՌԻՒՆ ԵԿԵՂԵՅՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Mrs. Armine Sirinyan, Mr. Hrant Khandjian \$40

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE VAHAN MEKHGEAVAKIAN:

Mekhgeavakian Family \$1000, Mr. Jacques Boghgegian, Mrs. Zephour Arekian \$300, Mrs. Sona Maroutian, Mr. Vrej Nigogossian, Mr. & Mrs. Garbis & Silva Ferah, Devletian Family, Mr. & Mrs. Hovig Nigoghossian, Mrs. Houry Boghgegian, Mr. Agop Boghgegian, Mrs. Elda Erdogmus, Mrs. Arlette Boghgegian \$100, Mrs. Melanie Tsardicos, Mrs. Christina Petrolekas & Family, Mrs. Rachel Doramajian, Mr. & Mrs. Apraham & Hilda Cakar, Mrs. Dita Menendyan, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Mrs. Madeleine Naltchayan, Mrs. Seta & Varoujan Artokun \$50, Mrs. Seta Saroyan \$40, Mr. & Mrs. Minas & Verjine Asaduryan, Mr. & Mrs. Berc & Emma Essen, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mr. Chris Mitsoglou, Mr. & Mrs. Yervant & Lana Zanazanian \$30, Mrs. Pergruhi Meremetci \$25

**REQUIEM EASTER REMEMBRANCEDAY OF THE DEAD-
MERELOTZ:**

IN MEMORY OF:

THE LATE MARTIN SEROPIAN:

Dr. Liliane Seropian \$1500

THE LATE LEVON MOURADIA:

Mr. & Mrs. Arto Mouradian \$300

THE LATE MIHRAN ZAVZAVADJIAN:

Mr. & Mrs. Apraham & Sylvia Aronian \$100,
Mrs. Marie Zavzavadjian, Mr. & Mrs. Ghevont & Vickie Zavzavadjian,
Mrs. Aline Zavzavadjian \$50

THE LATE ECITYAN FAMILY:

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$50

THE LATE AYYVATYAN FAMILY:

Mrs. Anahid Ayyvatan \$100

THE LATE MEREMETCI FAMILY:

Mrs. Pergruhi Meremetcı \$40

THE LATE VAROSIAN FAMILY:

Nina & Zinaida Varosian \$50

THE LATE DZEROUNIAN FAMILY:

Mrs. Nina Dzerounian \$50

THE LATE ZANAZANIAN FAMILY:

Mr. & Mrs. Yervant & Lana Zanazanian \$50

THE LATE SAAKIAN FAMILY:

Mrs. Daisy Saakian \$20

THE LATE SAGLAM & SIMSEK FAMILIES:

Ms Yepraksi Saglam \$100

PALM SUNDAY HOLY PICTURES:

Mr. Avedis Djihanian \$100

GOOD FRIDAY ALTER FLOWERS:

Mr. Raffi Frengul, Mr. Vasken Dakessian \$100, Mrs Silva Tursucu,

Mrs. Hilda Tursucu, Mr. & Mrs. Arshag Torudag \$25

EASTER EGG DONATION

Mrs. Yildiz Malo \$100:, Mrs. Karin Derderyan \$50, Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$40, Mrs. Hilda Tursucu, Mrs. Silva Tursucu, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Mr. Jirayr Gazeryan, Mr. & Mrs. Herman & Takouhi Odabasiyan, Mrs. Verjine Asaduryan, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mr. Krikor Arslan, Mrs. Sonya Djandjikian \$20

YOUGHAKIN EASTER:

Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$200, Mr. & Mrs. Garabet Pilavyan, Dr. & Mrs. Nurhan & Ani Ecityan \$150, Mrs. Aline Egoyan,

Mr. & Mrs. Hrant & Seka Gurarlan, Mr. & Mrs. Onnig Yavru, Mr. Haig Yasa, Mrs. Anahid Seropian, Mr. & Mrs. Krikor & Armine Kanar, Mr. Manouk Jamgotchian, Mr. Leon Kazandjian \$100, Mrs. Arsaluys Gerger, Mrs. Seta Kurkdjian, Mr. & Mrs. Hratch & Salpie Nerdjivanian, Mr. & Mrs. Nerses & Rachel Doramajian, Ms Madeleine Djihanian, Mr. Giancarlo Rivera, Mr. Vahe Kerestecian, Mrs. Irma Asician, Mr. & Mrs. Garbis & Hasmig Aposhian, Mr. & Mrs. Dikran & Rima Derderyan, Mr. & Mrs. Wanis Basmadjian, Mr. Agop Gurunlu, Mr. Varoujan Bedrossian, Mr. & Mrs. Arakel & Alice Arakelian, Mr. & Mrs. Noubar & Alidz Bostanian, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Mrs. Haiganoush Lakshminarayan, Mrs. Irma Basmajian, Mr. Hovsep

Keorhadjian \$50, Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan, Mr. & Mrs. Hazar & Hasmig Met \$40, Mr. & Mrs. Vahan Sekeryan, Mr. & Mrs. Krikor & Rosa Dikranian, Mrs. Takuhi Kasbar, Mrs. Germaine Koleoglu, Mr. & Mrs. Avedis & Mary Basmadjian, Mrs. Iris Voskian – Aslanian, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mr. & Mrs. Raffi Arabian \$30, Mr. & Mrs. Antranik & Verjine Sivaslioglu \$20

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲՈՒՒՆ

Ապրիլ – Avril

29, Երկուշաբթի – Թ ՕՐ ՅԻՆԱՆՑ

**Lundi 29 – 9ème jour de la période des 50 jours
qui vont jusqa à la Pentecôte**

30, Երեքշաբթի – Ժ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mardi 30 – 10ème jour

Մայիս– Mai

1, Չորեքշաբթի – ԺԱ. ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mercredi 1 - 11ème jour

2, Հինգշաբթի – ԺԲ. ՕՐ ՅԻՆԱՆՑ

Jeudi 2 – 12ème jour

3, Ուրբաթ - ԺԳ. ՕՐ ՅԻՆԱՆՑ

Vendredi 3 – 13ème jour

4, Շաբաթ– ԺԴ. ՕՐ ՅԻՆԱՆՑ

ՇԱԲՈՒՒՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Տիրոջ Ս. Յարութեան Հրաշագեղ այս տօնին օրը անկաշ-կանդ եւ համարձակ ըլլանք բոլոր ազգերու եւ կրօնապաշտ մարդոց մօտ վկայելու, թէ ինչպէս դարեր առաջ Քրիստոսի Սուրբ մարմինը Յարութիւն առաւ մեռելներէն:

Յարութիւն անունը կրող մարդոց անուանակոչութեան օրը շնորհաւորելով, կ'ուզեմ միշտ յիշէք Ձեր անուան ծագումին մասին, յիշեցէք եւ գիտակցեցէք բխող զօրութեան մասին...եղէք եւ մնացէք Տիրոջ բարի գործերուն տարածողները...Շնորհաւոր Անուանակոչութիւն:

Նեղոս Մինայեցի



Հոգեւոր Հովիւի Պատգամը

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱԶԱՏՏԻԿ ԹՈՎՄԱՍԻ ԹԵՐԱՀԱԲԱՏՈՒԹԻՒՆԸ

«Եթէ չտեսնեմ Անոր ձեռքերուն վրայ մեխերուն նշանը եւ իմ մատներս մեխերուն տեղը չդնեմ ու իմ ձեռքս Անոր կողը չխրեմ, չեմ հաւատար» (Յովհ. 20:25):

Միրելիներ,

Յովհաննէս Աւետարանիչին 20-րդ գլխուն 24-29 համարներուն մէջ կը խօսուի Թովմաս Առաքեալին թերահաւատութեան մասին: Ըստ Աւետարանին, երբ Յիսուսի աշակերտները Թովմաս Առաքեալին կ'ըսեն, թէ Տէրը եկաւ, չի հաւատար եւ մէջ բերած խօսքս կ'ըսէ: Չեմ հաւատար, մինչեւ չջօշափեմ: Յիսուս կու գայ եւ Թովմասին կ'ըսէ. «Բեր քու մատներդ եւ դիր այստեղ ու տես իմ ձեռքերս, եւ բեր քու ձեռքդ ու մտցուր կողիս մէջ, անհաւատ մի ըլլար, այլ՝ հաւատացեալ»: Թովմաս տեսնելով՝ կը հաւատայ եւ կ'ըսէ. «Տէր իմ եւ Աստուած իմ»: Յիսուս այս խօսքին կը պատասխանէ. «Որովհետեւ դուն զիս տեսար, հաւատացիր, երանի անոնց, որ չեն տեսներ եւ սակայն կը հաւատան» (Յովհ. 20:24-29):

Քրիստոնէութիւնը նոր եւ արմատական յեղաշրջում բերաւ անմահութեան գաղափարին: Ան անմահութիւնը դարձուց պայծառ իրողութիւն մը, հաստատելով Յիսուսի Յարութեան դէպքին վրայ: Քրիստոնէութիւնը եղաւ եւ է՝ այն միակ կրօնը, որ բոլոր դարերու մարդոց միտքը զբաղեցնող Յոբ երանելիի դասական հարցումին՝ «Եթէ մարդը մեռնի, նորէն պիտի կենդանանա՞յ» (Յոբ 7:9-10), կը պատասխանէ դրականապէս, յայտարարելով՝ «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»:

Այսպիսով քրիստոնէութիւնը լուսաւոր կեանքի մը արշալոյսը բացաւ մեղաւոր եւ յուսահատ մարդկութեան առաջ, որ անգլիացի մեծ բանաստեղծ Պայրոնի նման կ'ըսէ, թէ՛ «Անմահութիւնը կը ցրէ բոլոր ցաւերս, կը սրբէ արցունքներս եւ խորքէն լսող յաւիտենական որոտի պէս ականջիս կը հնչեցնէ այս ճշմարտութիւնը՝ «Դուն պիտի ապրիս յաւիտեան»:

Մեր ժողովուրդին կեանքէն ներս տեղ գտած է «Թովմաս ըլլալու» մասին խօսելաձեւը: Վստահութիւն փնտռող մարդիկ, մանրագրննին կերպով հարցերը քննելէն ետք, դարձեալ թերահաւատութեամբ կը մօտենան պատմածներուն: Այսպիսի մարդիկ ամէն ըսածը կասկածի տակ կ'առնեն ու չեն հաւատար մինչեւ անձամբ չստուգեն: Ժողովուրդը այդպիսիներուն կը դիմէ ըսելով. «Ինչ է, Թովմա՞ս եղար»:

Տարեցները կը պնդեն, որ հաւատքի մասին եղածը պէտք չէ մանրամասն քննել, այլ պէտք է ուղղակի հաւատալ:

Պատկերացուցէք, թէ մեզմէ մէկը շաբաթը կամ ամիսը մէկ Կիրակի կու գայ եկեղեցի, կ'աղօթէ, մոմ կը վառէ, գանձանակին մէջ իր համեստ գումարը կը դնէ, նոյնիսկ Սուրբ Հաղորդութիւն կը ստանայ, այս բոլորէն ետք, կը կարծէ՛ք, որ ան կրնայ ըսել «Ես հաւատացեալ եմ»: Անշուշտ, ո՛չ: Ինչո՞ւ, որովհետեւ քրիստոնէայի հաւատքին հիմքն ու սկիզբը ամենօրեայ աղօթքին մէջ է: Ուրեմըն պարզապէս եկեղեցի գալով, չի նշանակեր, թէ մենք ամբողջովին մեր հաւատքը կը ցուցաբերենք եւ կրնանք ըսել, թէ մենք հաւատացեալ ենք: Հաւատացեալ ըլլալ կը նշանակէ՛ հետեւիլ Յիսուսի օրինակին. Անոր օրինակին հետեւիլ կը նշանակէ՛ օգնել կարիքաւորին, խնամել հիւանդին, այցելել բանտարկեալներուն, մխիթարել սգաւորին, սիրել իր նմանին, այսինքն՝ բարի եւ արդար գործեր կատարել:

Յիսուս մեռաւ մարդոց հոգիներուն փրկութեան համար եւ Իր հրաշափառ Յարութեամբ նոր իմաստ մը ստացաւ Անոր Անձին գոհաբերութիւնը: Ուստի ընտանեկան կեանքէն ներս եւս ծնողներու անձի գոհաբերութեան գերագոյն օրինակը պիտի հանդիսանայ մեր Տէրը:

Այս ուրախ օրուան պատգամս է, որ ամէն հայ քրիստոնէայ իր աղօթքը նուիրէ մանաւանդ հայ ընտանիքին սրբութեան եւ մաքրութեան: Թերահաւատ մի ըլլաք Թովմաս Առաքեալին նման, թէ

այս օտար ավերուն մէջ անկարելի է հայ ընտանիքի սրբութիւնը պահպանել: Փորձենք ամենաչնչին հնարաւորութիւնը անգամ օգտագործել հայ ընտանիքի դիմագիծը պահելու համար:

Այս երկիրը տուած է ազատութիւն, ստեղծել ամէն ինչ, որպէսզի ամէն ժողովուրդ, որ բնակի հոս, իրեն խորթ չզգայ ու կարենայ պահպանել իր արժանութիւնները, սովորութիւնները եւ հոգեւոր կեանքը: Ուրեմն օգտուինք աշխրհի եւ մեր զաւակներուն ճանապարհի ուղին գծենք այդ ձեւով՝ հայ մնալու, հայութիւնը պահպանելու եւ մեր ընտանիքի սրբութիւնը իր բարձրութեան վրայ պահելու համար:

Օտարը այդ չընէր, մենք պիտի ընենք եւ վստահ եղէք, եթէ մենք քայլը կատարենք, Աստուած անպայման մեզի հետ պիտի ըլլայ: Մեր Տիրոջ Յարութիւնը մեզի նոր կեանք մը պարգեւեց եւ ես աւելի քան վստահ եմ, որ մեր ազգին աւելիով պիտի պարգեւէ: Վկայ է մեր ողբերգական, բայց փառաւոր պատմութիւնը: Կը մնայ մեզի աղօթել եւ միշտ աղօթել, որ Աստուած մեզի տայ հոգիի արիւթիւն, միտքի ու սիրտի հանգստութիւն եւ հաւատքի զօրացում:

Նոր Կիրակիի կամ Կրկնազատիկի այս գեղեցիկ օրը կրկին անգամ ցնծութեամբ եւ ուրախութեամբ բացականչենք՝ «Քրիստոս Յարեալ ի մեռելոց» եւ ստանանք յաղթական պատասխանը՝ «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան
Շոգեւոր հովիւ

Ուշադրութիւն

Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:

Շնորհակալութիւն ձեր համագործակցութեան համար:

Ծխական Խորհուրդ

Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԲ ԱԶԴ ԱՌՆԵՄՔ

Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից Տօնին
առիթով սոյն թուականի Փետրուար 26, 2019-ին

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց
Հայրապետի**

բարձր տնօրինութեամբ

եւ Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հօր՝

Գերշ. Տ. Արգար Եպս. Յովակիմեանի
միջնորդութեամբ

առ ի գնահատութիւն արդիւնաւոր ծառայութեան եւ վաստակի,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւ՝

Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեանին

շնորհուեցաւ լանջախաչ կրելու իրաւունք:

Արդ, մեր որդիական երախտագիտութիւնը կը յայտնենք
Առաջնորդ Սրբազան Հօր իր հայրական հոգածութեան եւ
բարեխօսութեան համար:

Այսու կը հրաւիրենք մեր Հայագն հաւատացելոց ներկայ
գտնուելու

Աշխարհամատրան (Կանաչ)

Կիրակի, 5 Մայիս 2019-ին,

առաւօտեան ժամը 10:30-ին,

Սուրբ եւ Անմահ Պատարագին,

յընթացս որի հանդիսապետութեամբ Թեմակալ Առաջնորդ
Սրբազան Հօր՝ պիտի յանձնուի Հոգեւոր Հովիւին Սրբատառ
կոնդակն ու լանջախաչը:

Եկեղեցւոյ Մամլոյ Դիւան

ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգևորականաց հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մտուր
- Եկեղեցոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեսօրնդատօջի համար նախատեսուած դուրսի մուկեր
- Տրորինէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սև

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանկ՝ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»:

«Հոգևոր հայելի»

Կանխապայտ շնորհակալութեամբ,
Հոգևոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Սիրելի հաւատացեալներ,

Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն գեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ'ուղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւետ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարել Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտարուիս նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

Հովիւ

եւ

Ծիական Խորհուրդ



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ հովանու ներքոյ գործող Կիրակօրեայ Վարժարանը, ներշնչուելով նոր սերունդի հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութենէն՝ անմիջական կարիքն ունի Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն լեզուներ դաստանելոյ մասնագէտներու, սիրայօժար սկզբունքով:



- Դասընթացքները պիտի կատարուին Կիրակի օրերը ժամը 11-էն սկսեալ:
- Հետաքրքրուողներէն կը խնդրենք դիմել Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066 թիւին:

կամ

- Արեւմտահայերէնի պատասխանատու՝ Շողիկ Գուշաքճրեանին (514) 690-2890:
Արեւելահայերէնի պատասխանատու՝ Ալինա Պեժանեանին (438) 889-8167:

Հոգեւոր Հովիւ
Եւ
Մի. Խորհուրդ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

École de dimanche Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմութեան Եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Զիյ, Սարգստեան



École de dimanche
Pour les enfants de 6 à 14 ans
Dans une ambiance chaleureuse et amicale on
Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- **Connaissance de la langue arménienne**
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

Chaque dimanche à 11 heures

Pour plus amples informations et inscription
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066
Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

Դաշնակի Դասընթացներ

Փոքրերու եւ չափասերու համար
Սկզբնակներու եւ երաժշտութեան հետեւողներու համար
Անհատական դասընթացքներ պիտի կատարուին՝
Ամեն Կիրակի ժամը 11-էն սկսեալ ,
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝

ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ հետ:

Շրջանաւարտ երաժշտագետ McGill համալսարանէն
եւ արժանացած Զեպեցի Ոսկեայ Մետալին
երաժշտական ծիրէն ներս:

Յանելեալ մանրամասնութիւններու համար
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

Piano lessons with a concert pianist

All ages – Children / Adults

For beginners & Music trainees

Individual courses will be held every Sunday at 11:00 am

Many years of experience

Theory & harmony

Preparation for Examen and competitions.

Master of Music in Performance from Mc Gill University

Quebec Gold Medalist

For further information

contact to the church office

at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com

or Teacher- Zinaida Varosian

at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2



Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի
կ'ունենան

Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1:30-ին:

Les répétitions de la chorale des Jeunes ont lieu
Les dimanches à 13:30 heures

Յաւելելալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան


Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու
հիմնական երաժշտութեան նորթաները, միաժամանակ պիտի
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront
l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le
solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի
բաղկանայ ժամանակակից, դասական եւ
կրօնական երաժշտական կտորներէ,
Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales
contemporaines, classiques et religieuses, de langue française et
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ 2019

ՇԱԲԱԹ, Օգոստոս 10--Օգոստոս 17, 2019

Մասնակցի շաբթուայ մը բացօդայ ճամբարին, ուր ինզիսրդ պիտի զգաս Հայկական մթնոլորտի մէջ եւ ուր պիտի հաստատես երկարատե բարակամութիւններ եւ ուրիշ ակամայ պիտի բաժնուիս անտրանայի



Դիմումագիրերը կարելի է հայթայթել www.campararat.ca կայքէջէն:
Հաճեցէք դիմումագիրերը դրկել եւ վճարումները կատարել մինչեւ Ապրիլ 1, 2019
Բւրաբանչիւր մասնակցողի համար վճարել \$555.00:
Տեղերը սահմանափակ են, հաճեցէք ձեր դիմումը չուշացնել

Ցաւէնլա տեղեկութեան համար հաճեցէք մեզ հետ կապ հաստատել campararat@gmail.com
հասցեով, կամ հեռաձայնել Անի Ալթունեանին 905-891-8216, կամ դիմել ձեր ծովիսի Հոգեւոր
Հովիսին եւ Միսական Խորհուրդին

Արարատ ճամբարին առաքելութիւնն է Գնատահայ երիտասարդին տրամադրել այնպիսի գուարթ, ապահով եւ
դաստիարակչական միջավայր մը, ուր ան փորձառական հմտութիւն ունենայ Քրիստոնեական հաւանքին, իր Հայկական
պատկանելիութեան, ինչպէս նաեւ կատարելագործել իր ընկերութեան, եղելեցիին ու համայնքին օգնելու յատկութիւնները:



**ՀԱՅՑ. ԱՌԱՋ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչև կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Address : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2